ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No _____ «_____» _____2016թ.

1286-Ա/2, 13.12.2016թ.

**2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1026-Ա/2, 1027-Ա/2, 1028-Ա/2, 1029-Ա/2, 1030-Ա/2, 1031-Ա/2, 1032-Ա/2, 1033-Ա/2, 1034-Ա/2, 1035-Ա/2, 1036-Ա/2, 1037-Ա/2 հրամանների 3-րդ կետերը ու ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1320-Ա/Ք հրամանի 6-րդ և 9-րդ կետերը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.**

1. Հաստատել 2017/2018 ուսումնական տարվանից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման և ներդրման նպատակով ընտրված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. Ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ պետական կրթական չափորոշիչների փորձարկման ընթացքի վերաբերյալ, վեցամսյա պարբերականությամբ, գրավոր հաշվետվություն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ՄԿՈՒԶԱԿ, իսկ փորձարկումն ավարտվելուց հետո ամփոփ հաշվետվություն՝ անհրաժեշտ գնահատումներով և առաջարկություններով:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:

**ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2016թ. _____ի -ի
N -Ա/2 հրամանի

# ՑԱՆԿ

2017/2018 ուսումնական տարվանից նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման և ներդրման նպատակով ընտրված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների

| | **Դասիչը** | **Մասնագիտությունը** | **Որակավորման դասիչը** | **Որակավորումը** | **Հաստատություն** |
|---|---|---|---|---|---|
| 1. | 0214.01.4 | Ոսկերչություն | 0214.01.02.4 | Մշակող՝ կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի | Բերդի արհեստագործական պետական ուսումնարան |
| 2. | 0713.03.4 | Էլեկտրակայանների և ցանցերի տեխնիկական սպասարկում | 0713.03.02.4 | Սպասարկող՝ ենթակայանների | Վանաձորի N 1 արհեստագործական պետական ուսումնարան |
| 3. | 0714.01.4 | Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկում | 0714.01.01.4 | Փորձարկող՝ էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների | Երևանի N 4 արհեստագործական պետական ուսումնարան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | 0732.07.4 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում | 0732.07.02.4 | Օպերատոր՝ բուլդոզերի | Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 5. | 0913.01.4 | Հիվանդի ընդհանուր խնամք | 0913.01.01.4 | Կրտսեր բուժքույր/բուժեղբայր/ | Երևանի «Էրեբունի» հայ-ամերիկյան պետական բժշկական քոլեջ |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2016թ. _____ի -ի
N -Ա/2 հրամանի

# ՑԱՆԿ

2017/2018 ուսումնական տարվանից միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման և ներդրման նպատակով ընտրված միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների

| N | Դասիչը | Մասնագիտությունը | Որակավորման դասիչը | Որակավորումը | Հաստատություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | 0114.04.5 | Պարի ուսուցում | 0114.04.01.5 | Պարուսույց | Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջի |
| 2. | 0214.01.5 | Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ | 0214.01.01.5 | Նկարիչ-ձևավորող | Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ |
| | | | | | Աբովյանի պետական քոլեջ |
| 3. | 0215.03.5 | Երաժշտության տեսություն | 0215.03.01.5 | Դասավանդող՝ երաժշտագիտական տեսական առարկաների | Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ |
| | | | | | Երևանի Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ |
| 4. | 0714.12.5 | Փոստային կապ | 0714.12.01.5 | Մասնագետ՝ փոստային կապի | «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Երևանի կրթահամալիրի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | 0811.04.5 | Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանություն | 0811.04.01.5 | Տեխնիկ՝ հողաբարելավման, հողային և ջրային պաշարների պահպանման | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրով |
| 6. | 0915.02.5 | Բուժական մերսում | 0915.02.01.5 | Բուժքույր/բուժեղբայր-մերսող | Երևանի «Էրեբունի» հայ-ամերիկյան պետական բժշկական քոլեջ |
| | | | | | Կապանի պետական բժշկական քոլեջ |
| 7. | 1041.03.5 | Թռչող ապարատների թռիչքային շահագործում | 1041.03.01.5 | Օդաչու՝ թռչող ապարատների թռիչքային շահագործման | «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ պետական քոլեջ |